

Болезни земной Церкви или язычество в христианстве

О «матахе», практикуемом в Армянской церкви (*армянский* вариант)

Մատաղի մասին

«Գրի՛ր նաև Պերգամոնի եկեղեցու հրեշտակին»... տեսայ քո գործերը
և գիտեմ որ բնակում ես այնտեղ ուր Սատանայի աթոռն է
բայց պահում ես իմ անունը նաև չուրացար իմ հաւատը ...
Բայց քո դէմ մի փոքր բան ունեմ ասելու այն որ քեզ մօտ կայ
վարդապետութիւնը Բաղաամի այն մարդու որ Բաղակին
սովորեցրեց գայթակղութիւն դնել իսրայէլացիների առաջ՝ որպէսզի
նրանք ուտեն կուռքերին զոհուած միս եւ պոռնկանան: Նոյնպէս
եւ դու ունես նիկողայոսեանների վարդապետութիւնը որ ես
ատում եմ: Արդ ապաշխարի՛ր ապա թէ ոչ իսկոյն կը գամ եւ
կը մարտնչեմ նրանց դէմ իմ բերանի սրով:» (Հայտնություն 2: 12-16)

Դարեր շարունակ Հայ եկեղեցին քարոզել է Հայաստանում Հիսուսի
Խոսքը: Նրա շնորհիւ է, որ այդ Խոսքը եւ նրա բարոյական օրէնքը սերտորէն
միաձուլվել են հայ ժողովրդի աշխարհահայացքի հետ: Այնուամէնայնիվ
Եկեղեցու ծառայության մէջ արկա են մի քանի ճակատագրական
մոլորություններ՝ որոնց պատճափով հայ ժողովրդի մեծ մասը գտնվում է մի
միջնական վիճակում, որը կարելի է կոչել կիսաքրիստոնեական –
կիսահեթանոսական: Այդ մոլորություններից մեկը *մատաղ* է, այսինքն
կենդանիների զոհաբերությունը, որն ակնհայտորէն վկայում է իմ նախնիների
Եկեղեցու հիվանդության մասին՝ մի հիվանդության, որը տէսնում եմ եւ որի մասին
չեմ կարող լուել:

Անդրադարձում եմ այս խնդրին՝ հասկանալով, որ այն առիթ պիտի դառնա
եկեղեցականների հարձակումներին իմ դէմ: Բայց անսահմանորէն ապավինելով
Հիսուս Քրիստոսի բարեգթության եւ նրա Խոսքի իսկության վրա՝ ջանում եմ ոչ
թե Եկեղեցուն վճա հասցնել, այլ փորձել առողջացնել նրան՝ սթափեցնելով մեր
հոգեւորականների միտքն ու սիրտը:

Մատաղը, կամ կենդանիների զոհաբերությունը համարվում է հայ ժողովրդի
այն հնագույն սովորույթներից մեկը, որի հետքերը կորչում են հին կտակարանի

ժամանակներում: Հաճախ այդպիսի զոհաբերություններ մատուցվում են ուղղակի եկեղեցական բակում, որտեղ դրանց համար նույնիսկ հատուկ տեղ է նախատեսված: Եկեղեցու իշխանությունները *մատաղը* բացատրում են ինչպես հայկական եկեղեցու ծիսական առանձնահատկություններից մեկը, որի գլխավոր իմաստը տեսնում են *Աստծուն նվիրատվություն* անելու եւ *աղքատներից ողորմություն տալու մեջ*: Չնայած նրան, որ այդ ծիսական առանձնահատկությունը այլ եկեղեցիների կողմից հեթանոսական ու բարբարոսական է անվանվել, Հայ Եկեղեցին շարունակում է պնդել՝ որ *մատաղը* խորը մարդասիրական եւ քրիստոնեական սովորույթ է, որ նա հնարավորություն է տալիս հավատացիներին բարեգթություն ցուցադրել աղքատների հանդեպ, իսկ Աստծուն՝ իրենց սերը: Արդարացնելով այն Աստվածաշնչում նշված կենդանիների զոհաբերություններով, - մասնավորապես կատարված Աբելի, Նոյի, Աբրահամի, Սահակի եւ այլ նախահայրերի կողմից, - Հայ Եկեղեցու հիերարխները վկայակոչում են նաեւ այն (իրենց կարծիքով) փաստը, որ **Խորհրդավոր Ընթրիքի ժամանակ Ինքն Քրիստոսը ճաշակել էր Զատիկ գառան միսը, որը ինքն իստ Մովսես մարքարեի պատգամած մատաղն է:**

Այսպիսով, մատաղը ներկայացվում է ինչպես *նվիրատվություն Աստծուն*: Սակայն եկեք տեսնենք, արդյոք Աստված ցանկանում է այդպիսի նվիրատվություն:

Մի այլ առիթով եւ արդեն գրել էի, որ Տերը մարքարեների բերանով բազմիցս անգամ նշել է արյունոտ զոհաբերության պատվիրանների խեղաթյուրված հասկացողությունը մարդու կողմից.

«Իմ օրենքիս բիրավոր կանոնները գրեցի անոր,» - ասում էր նա Օւէի շուրդերով, - *«սակայն օտար բանի պես սեպվեցան: Իմ ընծաներու զոհերուն համար՝ անոնք միս կը զոհեն, ու զայն կուտեն, բայց Տերը անանց չի հավանիր:»* (Օւէ 8: 12-13)¹

Այսպիսով Տերն ուղղակիորեն մեզ հաղորդում է, որ արյունոտ զոհեր չի ցանկանում: Նույնը կրկնում է Եսայիա մարքարեի շուրդերով.

«Իմ ինչի՞ն են պետք ձեր բազմաթիւ զոհերը, - ասում է Տերը, - եւ կշտացել եմ ձեր խոյերի ողջակէզներից, ձեր գառների ճարպը, ցուլերի ու նոխազների արիւնը չէ, որ ուզում եմ, եւ ոչ էլ այն, որ գաք ու կանգնէք իմ առաջ: Ո՞վ խնդրեց դա ձեզնից, մի՞ շարունակէք կոխտտել իմ գաւիթները: Եթէ ազնիւ ալիւրի հաց մատուցէք ինձ՝ զուր է լինելու. ձեր խնկերն էլ են պիղծ են ինձ համար. ձեր ամսամուտները, շաբաթները եւ տօնական մեծ օրը եւս անընդունելի են ինձ. ձեր պահեցողութիւնն ու հանգիստը, ձեր ամսամուտներն ու տօները ասեց իմ հոգին: Կշտացել եմ ձեզնից, այլեւս չեմ ների ձեր մեղքերը: Երբ աղօթքի համար դէպի վեր բարձրացնէք ձեր ձեռքերը, երես եմ դարձնելու ձեզանից, եւ եթէ բազմապատկէք ձեր աղօթքները, չեմ լսելու ձեզ, որովհետեւ ձեր ձեռքերը լի են արիւնով» (ԵՍԱՅԻ 1: 11-15)²

Այստեղ Տերն նորից է ընդգծում արյունոտ զոհաբերությունների ապարդյուն լինելը եւ նրանց պղծությունը: Իսկ մարքարե Երեմիայի միջոցով մեկ անգամ եւս հեզնանքով ասում է, որ այդպիսի զոհեր երբեք չի պատգամել:

«Այսպէս է ասում Զօրութիւնների Տերը՝ Իսրայէլի Աստուածը. «Ձեր ողջակէզները ձեր զոհերի հետ միասին հաւաքեցէ՛ք եւ մի՛ս կերէք: Ձեր հայրերի հետ ոչինչ չխօսեցի եւ ոչ էլ պատուէր տուեցի նրանց ողջակէզների եւ զոհերի մասին այն օրը, երբ նրանց հանեցի Եգիպտացիների երկրից» (ԵՐԵՄԻԱ 7: 21-22)²

Ուրեմն, նույնիսկ Եգիպտոսից իր որդիներին հանելու ժամին նրանց չի պատվիրել արյունոտ զոհաբերություններ անել: Ավելինը, Նա ցույց է տալիս

այդ զոհաբերությունների անհմաստությունը, երբ սաղմոսահան Դավիթի շուրթերով ասում է.

«Քո տնից հորթեր չեմ ընդունում, ոչ էլ քո հօտից՝ նոխազներ: Իմն են անտառի բոլոր գազանները, լեռների երէները եւ բոլոր անասունները: Գիտեմ եւ երկնքի բոլոր թռչուններին, եւ դաշտի գեղեցկությունն իմն է: Եթէ քաղց զգամ, քեզ բան չեմ ասի, քանզի իմն է աշխարհն իր ամբողջութեամբ: Ես չեմ ուտում քո հորթերի միսը, եւ քո նոխազների արիւնը չեմ խմում:» ([ՍԱՂՄՈՍ 49: 9-13](#))²

Իրոք, մի՞թէ ամեն ինչ Աստծուն չի պատկանում, մի՞թէ նա չէ ստեղծել բոլոր կենդանիներին, արդյո՞ք կարիք ունի Նա նվեր ստանալ մարդուց այն, որ արանց այդ էլ Իրեն է պատկանում: Եւ արդյոք ուտում է Նա կենդանիների միսը կամ խմում նրանց արյունը – այն կենդանիների, որոնց ինքն է ստեղծել:

Իրեն ուզածը Տերն Ինքն է պառզաբանում մարքարեների շրթերով.

«... ողորմություն եմ ցանկանում եւ ոչ թէ զոհաբերում, - ասում է Նա Ուէլի միջոցով, - Աստծու ճանաչումն աւելի եմ ցանկանում, քան ողջակէզները» ([ՕՍԷԷ 6: 6](#))²

Իսկ երբ մարքարե Միքիան ինքն իրեն հարց է տալիս. *«Ինչո՞ւ վիճալմ Տիրոջ մօտ, ապաւինեմ իմ բարձրեալ Աստծուն, ընդառաջ գնամ նրան ողջակէզներով եւ մէկ տարեկան հորթերով: Տէրը կ'ընդունի՞ հազարաւոր խոյեր կամ բիրաւոր պարարտ նոխազներ, տա՞մ իմ անդրանիկը ամբարշտութեան պատճառով եւ իմ որովայնի պտուղը՝ իմ անձնական մեղքերի համար:»*, Տերը պատասխանում է նրան. *«Պատմունէ՞ քեզ, ո՞ւր մարդ, թէ ի՞նչ է բարին եւ ի՞նչ է ուզում քեզնից Տէրը. իրաւունք հաստատել, ողորմություն սիրել եւ պատրաստ լինել քո Տէր Աստծու յետեւից գնալու»* ([ՄԻՔԻԱ 6: 6-8](#))²

Նույնը Նա հաստատում է սաղմոսահանի շուրթերով, երբ ասում է.

«Աստծուն օրհնութեան պատարագ մատուցի՞ր եւ Բարձրեալի առջեւ ուխտդ կատարի՞ր:» ([ՍԱՂՄՈՍ 49: 14](#))²

Նաեւ մարքարե Եսայի միջոցով, ցույց տալով միաժամանակ զոհաբերությունների սխալ ըմբռման ողբերգական հետեւանքները.

«Լուացուեցէ՛ք, մաքրուեցէ՛ք, իմ աչքի առաջ ձեր չար արարքները թօթափեցէ՛ք ձեզնից, վե՛րջ տուէք ձեր չարագործություններին: Սովորեցէ՛ք բարի ք գործել, արդարութի՛ւն փնտոեցէ՛ք, փրկեցէ՛ք զրկուածի՛ն, արդարադա՛տ տ եղէք որբի հանդէպ, իրաւո՛ւնք տուէք այրուն: Եկէ՛ք խօսենք իրար հետ, - ասում է Տէրը. - եթէ ձեր մեղքերը արեան պէս կարմիր են, ապա ես ձեան պէս ճերմակ կը դարձնեմ, եթէ որդան կարմիր լինեն, կը սպիտակեցնեմ ինչպէս բուրդ: Եւ եթէ յօժար լինէք ու լսէք ինձ, դուք կը ճաշակէք երկրի բարիքները. իսկ եթէ չկամենաք ինձ լսել, սո՛ւրբ պիտի ուտի ձեզ, քանզի Տիրոջ շուրթերն ասացին այս» ([ԵՍԱՅԻ 1: 16-20](#))²

Բերված օրհնակներից հետեւում է, – առաջինը – որ Տերը մարդուց հոգեւոր զոհաբերություններ է ուզում, Իր պատգամների կատարումը ու ոչ թէ արյունոտ զոհեր, եւ – երկրորդը – որ Աստվածաշնչում հիշատակված Աբելի, Նոյի, Աբրահամի, Սահակի եւ այլ նախահայրերի ջամանակներից եկող զոհաբերությունները աղճատված կերպով են հասկացվել, քանի որ դիտվել են ըստ մարմնի հասկացողության եւ ոչ իստ ոգու: Այնինչ նրանք ենթադրում էին մարդու մարմնին հատուկ կենդանական բնազդների զոհաբերությունը: Մարքարե Եզեկիէլի հետեւյալ խոսքերը, որոնք եւ նույնպես նշել են մի այլ առիթով, արյունոտ զոհաբերությունների այլաբանականության մի վառ օրինակ են ներկայացնում. Ըստ մարքարեի՝ Աստվածն ասում է.

«Նա Տիրոջը, որպէս ողջակէզ, կը մատուցի մէկ տարեկան առանց արատի մի անկիկ գառ, եւ դա կ'անի ամէն օր վաղ առաւօտեան» (ԵԶԵԿԻԷԼ 46: 13)²

Մի կողմ դնելով «մի՛ սպանիր» Աստծո պատգամը, որը ամեն մի կենդանի էակի է վերաբերվում, ուշադրություն դառցնենք այն կատարյալ ակնահայտության վրա, որ ոչ ոք չի կարող ամեն օր Աստծուն զոհաբերել միամյա անարատ գառնուկ: Եւ անա թե ինչու: Տարին 365 օր ունի: Նշանակում է Աստծուն հնազանդ մարդը տարվա 365 օրը պետք է ունենա միամյա մի գառ, այն էլ անարատ: Բայց դա անհնար է, նույնիսկ եթե անտեսենք կենդանիների բազմացման խիստ պարբերականությունը եւ մարդկանց տարբեր ունեվորությունը: Միայն այդ արդեն ցույց է տալիս, որ Մովսեսի պատգամները զոհաբերությունների նկատմամբ սխալ են հասկացվում եւ իրականում վերաբերվում են մարմնի ազատմանը խառնաշփոթ բնագոյներից եւ մարմնավոր խորհուրդներից: Այս խոսքերը նշանակում են, որ Տերն ուզում է տարվա 365 օրը մարդուն տեսնել միամյա գառնուկի պես անարատ: Իսկ այդպիսինը մարդը կարող է լինել միայն այն դէպքում՝ եթե օրեցօր այդի իր մեջ ամեն տեսակ մեղավոր մտքեր եւ խեղդի իր բոլոր մեղսագործ հավակնությունները:

Ուստի հասկանալի են դառնում Հիսուս Քրիստոսի Իր Երկնային Հորն ուղղված հետեւյալ բառերը.

«Զոհ եւ ընծայ չուզեցիր, հապա մարմին մը պատրաստեցիր ինձի: Ողջակեցներու եւ մեղքի պատարագներու չբարեհաճեցար: Այն ատեն ըսի. «Ահա՛ կու գամ (իմ մասին գրված է Գրքի պատանհին մեջ) քու կամքդ գործադրելու, ո՛վ Աստված»: ([ԹՈՒՂԹ ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻՆ](#) 10: 5-7; [ՍԱՂՄՈՍ](#) 39: 7-9)¹

Նշանակում է, որ միակ զոհը, որ Աստվածն ցանկանում է մարդուց, դա իրեն իսկ կողմից բերված զոհն է, այսինքն մարմնի զոհաբերությունը: Ինչպես մեզ հաղորդում է առաքյալ Պողոսը, Տիրոջ մարմինը, սուրբ լինելով հանդերձ՝ «մեղանշական մարմնի» նմանություն ուներ եւ իրեն մարմնի զոհաբերությունը «մեղքը մարմնի մեջ դատապարտելու» համար էր: ([ՀՌՈՍԷԱՑԻՆԵՐԻՆ](#) 8: 3)

Այդիսկ պատճառով էլ առաքյալը կենդանիների զոհաբերությունը հեթանոսության դուսեվորում էր համարում, ինչպես դեւերին բերված զոհաբերություն, իսկ այդ զոհի միսն ուտելը հավասարեցնում էր դեւերի սեղանից վայելմունքին կամ դեւերին հաղորդվելուն.

«Նայեցեք մարմնավոր Իսրայէլին, – գրում է նա. – անոնք որ զոհերէն կուտեն՝ զոհասեղանին հաղորդակից չեն ըլլար: Ուրեմն ի՛նչ կսես. կուտքք բա՛ն մըն է, կամ կուտքերու զոհվածք բա՛ն մըն է: Բայց սա կսես, թէ այն բաները՝ որ հեթանոսները կզոհեն, կզոհեն դեւերուն, եւ ոչ թէ Աստծոյ. ուստի չեմ ուզեր որ դուք հաղորդակից ըլլաք դեւերուն: Չք կրնար խմել Տէրոջ բաժակը ու դեւերուն բաժակը. չէք կրնար բաժնեկցիլ Տէրոջ սեղանին եւ դեւերու սեղանին» (1 [ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻՆ](#) 10: 18-21)¹

Եւ մի այլ տեղ.

«Բայց եթէ մեկը ըսէ ձեզի. «Ատիկա կուտքերու զոհված է», անոր պատճառով՝ որ ցոյց տվա՛վ ձեզի, եւ խղճմտանքի՛ պատճառով՝ մի՛ ուտէք» (1 [ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻՆ](#) 10: 28)¹

Դուրս է գալիս, որ Հայ եկեղեցու հեղինակությունները անտեսում են առաքյալի այս բառերը, որոնք բացի այդ վկայում են նաեւ այն կարծիքի անհեթեթության մասին, իբր թե Քրիստոսը ճաշակել է զատկի գառան միսը:

Հայտնի է, որ Խորհրդավոր Ընթրիքի ժամանակ նա զատկի գառան փոխարեն իրեն է առաջարկել, երբ հացը վերցնելով, «*օրհնեց ու կտրեց եւ տուեց աշակերտներին ու ասաց. «Առէ՛ք, կերէ՛ք, այս է իմ մարմինը»* Եւ բաժակ վերցնելով՝ *զոհութիւն յայտնեց, տուեց նրանց ու ասաց. «Խմեցէ՛ք դրանից բոլորդ, որովհետեւ այդ է նոր ուխտի իմ արինը, որ թափուում է*

շատերի համար՝ իրենց մեղքերի թողութեան համար:» ([ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ԱՍՏԹԷՈՍԻ](#) 26: 26-28)

Ուրեմն հարց է ծագում. ի՞նչպես կարող է Եկեղեցին միեւնույն ժամանակ հաղորդել մարդկանց եւ Աստծու եւ դեւերի սեղանին:

Ավելին, հաստատել, որ Քրիստոսը ճաշակել է գատկի առիթով զոհաբերված գառը, նշանակում է անտեսել իր զոհաբերության էությունը, որը նրանումն էր, որ գատկի գառը փոխարինվում էր Տիրոջ մարմնով: **Ջատիկը Ինքը Տերն է լինելու եւ ոչ թէ զոհաբերված կենդանու միսը:** Այդ նկատի ուներ Հիսուսը երբ ասաց. *«Յոյժ ցանկացայ այս Պասեքի ընթրիքը ուտել ձեզ հետ, քանի դեռ չեմ չարչարուել:»* ([ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍՍԻ](#) 22: 15)²: Իսկ ճաշակել իրեն «մարմինը» նշանակում է ճաշակել կյանքի մաքրագույն հացը, որը Աստծու խոսքն է:

Այսպիսով, նա գլուշացրեց, որ զոհաբերված կենդանու միսը չպետք է ուտել, որովհետեւ նա փոխել է այն իրենով: Գառնուկը ինքն էր: Եւ շարունակել զոհաբերել որեւիցէ կենդանու միսը նշանակում է **զրոյի հավասարեցնել Տիրոջ բերած զոհը:** Հենց այդ պատճառով է, որ առաքյալն ասում է.

«Մաքրեցէ՛ք, դէ՛ն նետեցէ՛ք հին խմորը, որպէսզի նոր զանգուած լինէք, առանց թթխմորի. քանզի Քրիստոս՝ մեր գատիկը, մորթուեց» ([1 ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻՆ](#) 5: 7)²

Այս բառերը վկայում են, որ օրհնելով կենդանիների զոհաբերությունները, Հայ եկեղեցին օգտվում է «հին խմորից», թույլ չտալով այդպիսով, որ ծխականները «նոր» խմոր դառնան: Սակայն այդօրինակ զոհաբերությունների հրեշավորությունը կայանում է նաեւ նրանում, որ այն մատուցողները ի հակառակ փրկչի նշված խոսքին զոհի արյունով խաչ են գծում ներկաների ճակատին, ի նշան Աստծու օրհնության, փոխարինելով Քրիստոսի «արյունը» կենդանու արյունով: Այս ամենը նախապայմանված է նաեւ այն համոզմունքով, որ Քրիստոսը գատկի գառան միս է կերել: Բայց հիշենք, որ փրկիչը ոչ մի դեպքում չէր կարող դա անել, գոնե այն պատճառով, որ չապրեց մինչեւ Ջատկի տոնը, քանի որ նրան խաչեցին այդ տոնի նախօրյակին՝ որբաթ օրը: Իսկ Խորհրդավոր Ընթրիքը տեղի էր ոնեցել հինգշաբթի օրը: Այդ մասին շատ պառզ ձեւով մեզ պատմում է Հովհաննեսի Աւետարանը, որը ի տարբեր մյուս Ավետարանների ավելի հաջորդաբար եւ հավաք ձեւով է պատմում Քրիստոսի խաչման նախօրյակի մասին: Բացի դրանից պարզ ասում է.

«Իսկ քանի որ ուրբաթ էր, որպէսզի մարմինները չմնան խաչի վրայ մինչեւ շաբաթ օրը, - որովհետեւ այն շաբաթը տօնական մեծ օր էր, - հրեայ առաջնորդները Պիղատոսին աղաչեցին, որ կոտորեն նրանց սրունքները եւ վերցնեն նրանց» ([ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ](#) 19: 33)²

Այսպիսով աղբաթների հանդեպ գթասարտության դրսեւորումը չի կարող արդարեցնել մատաղը, քանի որ Տերը անարյուն զոհաբերություններ է ցանկանում: Ցանկանալով հաճոյանալ Նրան՝ մարդը կարող է չունեւորների հետ կիսել այն ամենը, ինչ ունի, ներառյալ նաեւ ուտելիքը, սակայն առանց արյուն թափելու:

Իհարկէ, Հայկական եկեղեցու ներկայացուցիչները գիտեն այս ամենը, սակայն դրան պատշաճ նշանակություն չեն տալիս՝ կարծես թէ «*օտարոտի համարելով*» (Օսէէ 8: 12-13) այն: Արդյունքում նրանք, ովքեր արյունոտ զոհաբերություններ են անում, առանց ցանկանալու, իրենց տգիտության պատճառով առժեյքում են Քրիստոսի զոհաբերության փրկարար նշանակությունը եւ հաղորդվում են դեւերի սեղանին:

Պարզ է, որ այդպիսի զոհաբերությունները միայն հեռացնում են Քրիստոսից եւ չեն սէրմանում պատկառանք կյանքի նկատմամբ: Հակառակն դրանք դաժանություն եւ անսրտություն, անտարբերություն եւ ինքնահաճոյություն են անեցնում մարդկանց մեջ:

Տեսնելով այդ ամենը՝ ինքս ինձ հարցնում եմ. մինչեւ ե՛րբ պիտի Եկեղեցին իրեն կամքը հակադրի Աստծո կամքին: Ե՛րբ նա վերջապես կսթափվի եւ կդաթարի

հետեւել տգետ մարդկանց քմահաճույքներին: Ե՛րբ իր մեջ ուժ կգտնի վերջ տալու հեթանոսության անհեթեոս մնացուկներին, որոնք պղտորում են մեր փրկչի զոհաբերության իմաստը: Ե՛րբ նա այդ զոհաբերությունը մատչելի կդարձնի հասարակ ծխականի համար, որը այժմ չգիտի, ինչ է անում, քանզի իրեն քրիստոնյա համարելով, մնում է նույն անգիտակից ու անօրեն հեթանոսը, ինչպիսին էր մինչեւ Քրիստոսի գալը:

Գուցե եկեղեցու կերպարափոխումը ինչ որ մի բան կփոխի նաեւ հայ ժողովրդի ողբերգական ճակատագրի մեջ:

Աստվածաշնչի օգտագործված թարգմանությունները հետեւյալն են.

1. <http://www.armenianchurchlibrary.com/westernarmenianbiblefromenglish-arm.html>

Հայ Առաքելական Եկեղեցու Գրադարան

Աստվածաշնչյան Թարգմանություններ եւ Ուսուցումներ

Աստվածաշնչի Արեւմտահայերեն Թարգմանությունը Անգլերենից

2. <http://www.armenianchurchlibrary.com/files/easternarmenianbible/>

Հայ Առաքելական Եկեղեցու Գրադարան

ԱՍՏՈՒԱԾՍԵՇՈՒՂՉ ՄԱՏԵԱՆ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ

ԱՐԵՒԵԼԱՆՅԱՅԵՐԵՆ ՆՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին եւ

Հայաստանի աստուածաշնչային ընկերություն, 1994

Հայաստան, Երեւան 375015, Չափեան 6/26

Նշված թարգմանություններից առաջինը ավելի հաջող է թվում, մինչ դեռ երկրորդում ակնհայտ եղան տողեր, որոնք կառծես թե մինչեւ վերջ չեն մտածված: Այնուամենայնիվ զութ տեխնիկական պատճառներով դիմել եմ նաեւ այս վերջին թարգմանությանը քաղվածելով քիչ թե շատ հաջող հատվածները: Մնացած դեպքերում նախընտրել եմ առաջին թարգմանությունը:

К содержанию книги